ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 2102 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 12-րդ, 18-րդ և 22-րդ կետերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել պետական գույքի կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության անունից կնքված գործարքներով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը, սահմանել պետական գույքի գրավադրման պայմաններն ու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման պայմանագրերում ամրագրվում են միայն այն պարտավորությունները, որոնք սահմանվել են պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման տրամադրման գործարքների մասին համապատասխան իրավական ակտերով (Հայաստանի Հանրապետության կառավարության

որոշում, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի հրամաններ) կամ առաջարկվել են մրցութային եղանակով (պետական գույքի մասնավորեցման կամ օտարման կամ օգտագործման տրամադրման դեպքերում) մրցույթի հաղթող ճանաչված մասնակից գնորդի, վարձակալի կամ փոխառուի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում:

3. Պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման պայմանագրերում սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է կոմիտեի կողմից պայմանագրով սահմանված ժամկետներում և սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն գնորդի կողմից ներկայացված հաշվետվությունների և պարտավորությունների կատարումը հաստատող փաստաթղթերի հիման վրա՝ կատարվող ուսումնասիրությունների և տեղազննումների միջոցով:

4. Սահմանել, որ շինարարության ոլորտում գույքի ներգրավմամբ ներդրումային ծրագրի իրականացման դեպքում ծրագրով նախատեսված ներդրումների կառուցվածքի արժեքային համամասնությունների մինչև 10 տոկոսի փոփոխությունները համարվում են ընդունելի, եթե գնորդը սահմանված ժամկետում կատարել է ներդրումների գծով ստանձնած պարտավորությունները և ներկայացրել է ավարտական ակտի և իրավունքի գրանցման վկայականի պատճեններ:

5. Կոմիտեի նախագահին՝

1) պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման մասին իրավական ակտերում ներառել դրույթներ՝ ըստ ներդրումային ծրագրի ներդրումների ընդհանուր ծավալի և կատարման միջանկյալ ու ավարտական ժամկետներում իրականացվող ներդրումների չափի, ներդրումների կատարման սկզբի և ներդրումների ամբողջական կատարման պայմանների մասին, ինչպես նաև չկատարման դեպքում՝ կիրառվող տուգանքների չափի,

մասնավորեցվող և օտարվող գույքի դեպքում՝ գրավադրման ենթակա լինելու կամ չլինելու վերաբերյալ.

2) պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման պայմանագրերում սահմանել, որ գնորդը, վարձակալը և փոխառուն առանց կոմիտեի գրավոր համաձայնության չի կարող երրորդ անձի վաճառել կամ օգտագործմանը հանձնել պարտավորություններով ծանրաբեռնված գույքը: Ընդ որում, երրորդ անձին տվյալ գույքի վաճառքի կամ օգտագործման հանձնելու դեպքում կողմերի միջև կնքվում է եռակողմ համաձայնագիր, պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման մասին.

3) պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման պայմանագրերում ամրագրված պարտավորությունների առանձնահատկություններից և անհրաժեշտությունից ելնելով, ոլորտային մասնագետների ներգրավմամբ ստեղծել համապատասխան հանձնաժողով՝ պայմանագրերով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարումն ընդունելու և գրավադրումից հանելու աշխատանքները կատարելու համար.

4) գրավի պայմանագրում նախատեսել, որ գրավ դրված գույքը կոմիտեի կողմից վաճառքի վերաբերյալ եռակողմ համաձայնագիր կնքելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը և նոր սեփականատերն իրավահաջորդության կարգով ստանձնելու է գործարքի արդյունքում գնորդին վերապահված ամբողջ պարտավորությունները.

5) յուրաքանչյուր հաշվետու տարվա մինչև դեկտեմբերի 25-ը ներդրումների կատարումն հավաստող փաստաթղթերի հիման վրա հաշվառել տվյալ հաշվետու տարվա ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը՝ ըստ իրականացված գործարքների տեսակների: Ընդ որում, ներդրումների ծավալում հաշվարկել նաև գնորդի կողմից մասնավորեցված և օտարված օբյեկտների ձեռքբերման ուղղությամբ ներդրված միջոցները (վաճառքի գները):

6. Սույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-19-րդ կետերի պահանջները տարածվում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված և

դեռևս չավարտված պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) և օգտագործման պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման վերահսկման, ինչպես նաև գրավադրման գործընթացի վրա:

7. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում որոշման 6-րդ կետի հիմքով փոփոխություններ կատարել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված և դեռևս չավարտված պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) և օգտագործման պայմանագրերում:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի «Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման վերահսկման գործընթացը կանոնակարգելու, ինչպես նաև գրավադրման պայմանները սահմանելու մասին» N 1955-Ն որոշումը, բացառությամբ որոշման 1-ին կետի, որն իր ուժը պահպանում է մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ